Միաժամանակ այս փառաւոր յաղթութիւններին զուգընթաց կառավարութիւնը այս երկու ամսայ ընթացքում լաւած աշխատանք է կատարել: Երկու ամսայ ընթացքում նա ընդունել է 52 օրինագիծ, անց է կացրել 117 նախահաշիւ, վարկ և ունեցել է շատ կարևոր որոշումներ*):

Կառավարութեան համար խոշոր մտահոգութեան պատճառ է հացի խնդիրը: Մեր երկրի բերքը մեր կարիքներին կը բաւարարէ 8–9 ամիս. մենք այս տարի կարող ենք հաւաքել մեր արտերից մինչև 7 միլիոն փութ ցորեն: Մեզ կը պակասի մօտ 3 միլիոն փութ հացահատիկ. ձեռք բերելու համար արդէն որոշ քայլեր ենք անում: Գնումների և այլ միջոցների շնորհիւ մենք, հաւանօրէն, կը կարողանանք առաջիկայ տարին առանց ճգնաժամի անցկացնել:

Կառավարութիւնը ուշադրութիւն է դարձրել մեր հարկային սիստեմը վերամշակելու վրա (այս խօսքի ժամանակ պարլամենտի քարտուղար Ա. Սաֆրաստեանը նախարարապետին յանձնում է նոր ստացած հեռագիրը):

Նախարարապետ Հ. Օհանջանեանը, ընդհատելով իր զեկուցումը, կարդում է այդ հեռագիրը, որն աւետում է Դրօի հրամանատարութեան տակ մեր զօրքերի նոր յաղթանակի մասին. Զանգեզուրի ճակատում, կուից յետոյ, մեր զօրքերն առել են 12 գերի, 1 օթոմոբիլ, դնդացիրներ, բազմաթիւ հրացաններ, ահագին քանակութեամբ փամփուշտ և այլն: Տեղական ազգաբնակութիւնը և գիւղացիութիւնը մեր զօրքերին միացած հետապնդում են փախչող թշնամուն (քուռն աղմկալից ծափեր):

Նախարարապետը շարունակում է իր ընդհատած զեկուցումը. —

Մեր հարկային սիստեմի վերամշակման համար կազմուել է յատուկ յանձնաժողով, որը նախապատրաստական աշխատանքներ է կատարում: Անկախութեան փոխառութեան վերաբերմամբ տեսաք ժողովրդի դիտակից և խանդավառ վերաբերմունքը: Մեր պետական հաշւապահութիւնը նոր հիմքերի վրա է դրւում: Պետական դոյքերի հաւաքման և կանոնաւորման համար գործնական աշխատանքներ են կատարւում: Հողային հարցը լուծելու համար կազմուել են հողային կոմիտէներ: Այդ հողային կոմիտէները մեծ գործ կատարեցին: Ամէն մի գիւղ ապահովւած է հողային բաժիններով: Հայացման գործը արագացուել է: Գործավարութիւնը արդէն հայերէն է տարւում, հայացւում է նաև պաշտօնէութիւնը: Հայաստանի համալսարանը Ալեքսանդրապոլից տեղափոխւում է Երևան: Բացի պատմա–լեզուաբանական ֆակուլտէից բացւում են նոր ֆակուլտէներ, ինչպէս օրինակ, բնագիտա–մաթեմատիկական՝ գիւղատնտեսական բաժանմունքով, իրաւաբանական և բժշկական ֆակուլտէներ:

Այնուհետև նախարարապետը խօսում է արդէն անցկացրւած հացի ճգնաժամի վերաբերմամբ կառավարութեան ձեռք առած միջոցների մասին, որից յետոյ մանրամասնաբար տեղեկութիւններ է տալիս ամէն մի նախարարութեան գործունէութեան մասին.

Ֆինանսական դրութիւնը բարւոքելու համար միջոցներ էին ձեռք առնւել: Ապրանքների ներածումը սահմանափակւեց և արտահանման պայմաններն ու հնարաւորութիւնները ընդլայնւեցին: Արգելւեց մեծ քանակութեամբ մեր չէկերի արտասահման տանելը: Դրամական փոխադրումների գործը կանոնաւորւեց և սոյն օգոստոս 15–ից դրամական փոխադրումներ կը կատարւեն նաև քաղաքացիների համար: Պետական էքսպեդիցիան ընդ–

*) Նախարարապետը թւում է գլխաւորները դրանցից: